ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

11.03.2021թ. ժ.14:00

***Մասնակցում էին՝*** *Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան,Ն.Բաղդասարյան, Ա.Սաֆյան, Լ.Պետրոսյան, (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)*
***Հրավիրված էին՝*** *Լ.Քալանթարյան, Լ.Մարկոսյան*
*Նիստն անցկացվել է հեռավար:*

**Օրակարգի նախագծում հինգ հարց.**

1. «Կանանց առողջության և կենսափորձի մասին հետազոտության հարցաթերթը ու լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*
2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2018 և 2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին տրամադրելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*
3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2009-2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները վերլուծաբան Կարեն Սարգսյանին տրամադրելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*
4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2010-2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*
5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:
*/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**
1. «Կանանց առողջության և կենսափորձի մասին հետազոտության հարցաթերթը ու լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*
**Որոշեցին՝**
հաստատել «Կանանց առողջության և կենսափորձի մասին» հետազոտության հարցաթերթը, հարցաթերթի լրացման հրահանգը, համաձայն հավելված 1-ի և 2-ի:
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
*/Նորմատիվ/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*
**Լսեցին՝**
2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2018 և 2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին տրամադրելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*
**Որոշեցին՝**
ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2018 և 2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները (այսուհետ՝ տվյալների բազաներ):
Սահմանել, որ տրամադրվող տվյալների բազաները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել

անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2009-2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները վերլուծաբան Կարեն Սարգսյանին տրամադրելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշեցին՝**

Միջազգային գիտահետազոտական (Internet in the Post-Soviet Area-Technological, Economic and Political Aspects) խմբի Հայաստանի ներկայացուցիչ Կարեն Սարգսյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2009-2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները (այսուհետ՝ տվյալների բազաներ):
Սահմանել, որ տրամադրվող տվյալների բազաները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2010-2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2010-2019 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները (այսուհետ՝ տվյալների բազաներ):
Սահմանել, որ տրամադրվող տվյալների բազաները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ